ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ
ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Համայնքի 2016թ. բյուջեի 1-ին կիսամյակի եկամուտների պլանը կատարվել է 75.2%-ով,341.7 մլն. դրամ ճշտված պլանային եկամուտների դիմաց հավաքագրած և պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 257.0 մլն. դրամ: Նախորդ՝ 2015թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ համայնքի բյուջեն գերակատարվել է 13.2%-ով, կամ ավել եկամուտները կազմել են 30.0 մլն. դրամ:

2016թ. բյուջեի 1-ին կիսամյակի վարչական մասը կատարվել 91.1%-ով / պլան՝ 245.6 մլն. դրամ, փաստացի՝ 223.8 մլն. դրամ / : 2015թ. նույն ժամանակահատվածի համեմատ, 2015թ. 1-ին կիսամյակում վարչական բյուջեում ավել եկամուտները կազմել են 0.5մլն. դրամ: Վարչական բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 65.5%-ով: Նախորդ՝ 2015թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ սեփական եկամուտները պակասել են 4.5%-ով, կամ սեփական եկամուտների հավաքագրումը պակասել է 2.0 մլն. դրամի չափով: Սեփական եկամուտների թերակատարման հիմնական պատճառներն են՝

- ✓ ֆիզիկական և իրավաբանական անձանց անվճարունակությունը.
- ✓ համայնքի բնակչության զգալի մասի բացակայությունը հանրապետությունից.
- ✓ ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից հողի վարձավճարների չվճարումը:

2016թ. ֆոնդային բյուջեի 1-ին կիսամյակի եկամուտները կատարվել է 34.5%-ով / ճշտված պլան՝ 96.1 մլն. դրամ, փաստացի 33.1 մլն. դրամ /: Նախորդ 2015թ. համեմատությամբ ֆոնդային բյուջեի փաստացի եկամուտները ավելացվել են 29.5 մլն. դրամով կամ 8.1 անգամ: Ֆոնդային բյուջեի գծով բացակայում են կապիտալ եկամուտները՝ հողի օտարում, իսկ ավելացումը 29.5 մլն. դրամի չափով կապված է պետական բյուջեից համայնքի ավտոճանապարհաշինության գծով 29.7մլն. դրամի չափով սուբվենցիայի հատկացման հետ:

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Եկամուտների կատարման մակարդակից ելնելով՝ կատարվել են համայնքի 2016թ. 1-ին կիսամյակի բյուջետային ծախսերը: Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել է 75.5%-ով: 340.9 մլն. դրամ պլանային ծախսերի դիմաց փաստացի կատարվել է 257.5 մլն. դրամի ծախս, կամ թերակատարումը կազմել է 83.4 մլն. դրամ:

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 90.2%-ով, թերակատարումը կազմել է 24.5 մլն. դրամ, այդ թվում՝ 0.5 մլն. դրամ՝ վարչական բյուջեի պահուստային ֆոնդի գծով ծախսերի մասով, 0մլն. դրամ՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ, 31.4 մլն. դրամ՝ կրթության և մշակույթի ծախսեր: Կրթության, մշակույթի ծախսերը ֆինանսավորվել են միջինը 98.6%:

2015թ. 1-ին կիսամյակի համեմատությամբ 2016թ. նույն ժամանակահատվածի վարչական բյուջեի ծախսերը պակասել են 13.4%-ի չափով:

Համայնքի բյուջեի 2016թ. 1-ին կիսամյակի ֆոնդային մասի ծախսերը կատարվել է 52.5%-ով, նախորդ 2015թ. համեմատությամբ ֆոնդային բյուջեի գծով ավել ծախսեր են կատարվել 27.7 մլն. դրամի չափով, կամ 73.0%-ով: Ֆոնդային բյուջեի ծախսերի կատարումը ապահովվել է միայն վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացման հաշվին:

Ֆոնդային բյուջեից հատկացվել է 47.1մլն. դրամ փոսային հիմնանորոգման ծախսերի համար, որը ամբողջությամբ 2014-2015թթ. պարտքի մարմանն է ուղղվել: Կատարվել են նաև այլ ծախսեր: Ընդհանուր պարտքը առ 01.01.2015թ. կազմել է 175.4 մլն. դրամ: 2016թ. 1-ին կիսամյակում մարվել է 44.9 մլն. դրամ պարտք, ա/թ՝ տեղափոխված փոսային հիմնանորոգման պարտքերից՝ 43.3 մլն. դրամ: 2016թ. 1-ին կիսամյակում նոր պարտքեր չեն գոյացել: